ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, *Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2014, 332 էջ:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ վերջերս լույս է տեսել ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Մարուքյանի «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները» խորագրով ուսումնասիրությունը (խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ. Աշոտ Մելքոնյան, ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավաբանական ծառայության պետ, ի. գ. թ. Վլադիմիր Վարդանյան):

Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցի նախօրեին նման կարևոր աշխատության հրապարակ գալը խիստ անհրաժեշտ է ու արդիական, քանի որ հեղինակի առաջադրած խնդիրներն ու առավել ևս դրանց տված գործնական լուծումները մեր օրերում գալիս են լրացնելու հայտնի միջազգայնագետներ Ջոն Կիրակոսյանի, Յուրի Բարսեղովի, Վահագն Տատրյանի, Արա Պապյանի և այլոց կատարած շնորհակալ աշխատանքները:

Գրքի առաջաբանում հեղինակը նշում է, որ իր ուսումնասիրության նպատակն է «հրապարակի վրա եղած պատմագիտական և իրավագիտական ուսումնասիրությունների, միջազգային իրավական նորմերի և դիվանագիտական փաստաթղթերի հիման վրա ցույց տալ այն հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործում» (էջ 7):

Հինգ ծավալուն գլուխներից բաղկացած սույն բազմաբնույթ գիտական ուսումնասիրության մեջ Ա. Մարուքյանը հանգամանորեն քննության է ենթարկել Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրների պատմաիրավական արմատները՝ սկսելով XVIII դարավերջից Օսմանյան կայսրությունում քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանության նպատակով մեծ տերությունների «մարդասիրական միջամտություններից», հասցնելով մինչև XX դարասկզբին Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության սահմանումը, ինչպես նաև Թուրքիայի հանրապետության՝ որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավասուբյեկտ և, ի վերջո, ՄԱԿ-ի 1948 թ. ցեղասպանության մասին կոնվենցիայի հարցերին և այլն:

Հեղինակը նշում է, որ անցյալ տասնամյակներին տարբեր երկրնե-

րի օրենսդիր մարմինների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության փաստը ճանաչող ու դատապարտող բանաձևեր են ընդունվել, որոնց շնորհիվ այդ երկրներն իրենց սկզբունքային դիրքորոշումն են արտահայտել XX դարասկզբին հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում իրագործած ոճրագործության վերաբերյալ: Սակայն հանցագործ պետությունն առ այսօր ոչ միայն չի ընդունում իր մեղքը, այլև ամեն կերպ ճգնում է հերքել, խեղաթյուրել հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած 1915–1923 թթ. պատմական ստույգ իրադարձությունները:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այն, լինելով ԽՍՀՄ կազմում, ի զորու չի եղել այդ հարցը բարձրացնել միջազգային ատյաններում: Փոխարենը Հայ սփյուռքը, չլինելով միջազգային իրավունքի սուբյեկտ, այնուամենայնիվ, ձգտել է մի շարք երկրներում հասնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը:

Ա. Մարուքյանն իրավացիորեն գտնում է, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը դարձել է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային հարցերից մեկը. «Ուստի այսօր անհրաժեշտ է ձերբազատվել նախկին կարծրատիպերից և խնդիրը ձևակերպել որպես Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարում, ինչը ենթադրում է տվյալ հանցագործության թե՛ ճանաչում ու դատապարտում, և թե՛ դրա հետևանքով տուժած հայ ժողովրդին հասցված վնասների հատուցում» (էջ 270):

Հեղինակն ըստ առաջնահերթության թվարկում և հանգամանորեն վերլուծում է Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդին հասցված վնասներն ու կորուստները՝ հայրենազրկում, մարդկային, մշակութային, նյութական, հոգեբանական:

Հայրենազրկումը՝ *հայրենի բնօրրանի զգալի հատվածի կորուստը, ծանր հետևանքներ է ունեցել հայ ժողովրդի հետագա կենսագործունեության ու զարգացման վրա: Արդյունքում ստեղծվել է Հայ սփյուռքը՝ որպես պատմական իրողություն: Հրաշքով փրկված արևմտահայերը, կորցնելով իրենց բնօրրանը, ստիպված հայրենիքից հեռու՝ օտար երկրներում ամեն ինչ սկսել են առ ի չգոյէ և պարտադրված գոյատևել են: Դա երկփեղկվածություն է առաջացրել հայ ժողովրդի միասնության մեջ, ջլատել է նրա ուժերը և կասեցրել բնական զարգացման հնարավորությունները: Ցեղասպանության հետևանքով աշխարհագրականորեն միմյանցից հեռացել են հայ ժողովրդի երկու հիմնական հատվածները՝ խզում առաջացնելով սփյուռքահայերի և հայաստանցիների միջև: Ապրելով տարբեր վարչակարգերում, ժամանակի ընթացքում նրանք ձեռք են բերել միմյանցից տարբեր մտածողություն, ինչը բարդացրել է համահայկական հարցերի լուծումը:*

Հետազոտողն անդրադառնում է Հայոց ցեղասպանության ընթացքում հայ ժողովրդի կրած անթիվ ու անհաշիվ մարդկային կորուստներին: *Նրան ևս չի համոզում անմեղ զոհերի մեկուկես միլիոն թվաքանակը: Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում նաև ցեղասպանության քաղաքականության ընթացքում իսլամացված հայերի պարագան, որը ցեղասպանության զոհ-ժողովրդի համար նույնպես մարդկային կորուստ*

է, քանի որ այդ գործընթացի հետևանքով նրանք հեռացել են իրենց ազգային ինքնությունից: Հեղինակը ցավով է նշում, որ անցնող հարյուր տարիների ընթացքում արևմտահայերն առնվազն չորս անգամ կարող էին վերարտադրվել, եթե ողջ մնային: Այնպես որ, մարդկային կորուստն ոչ մի կերպ հնարավոր չէ հատուցել:

Ա. Մարուքյանը, հիմնվելով պատմագիտական ստույգ տվյալների վրա, քննության է ենթարկում հայ ժողովրդին հասցված մշակութային վիթխարի կորուստները *ևս և որպես ապացույց մեջբերում վիճակագրական տվյալներ. «1914 թ. թուրքական պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ արևմտահայերն ունեին 83 առաջնորդարան, 1860 հայկական եկեղեցիներ ու մատուռներ, 451 վանքեր և շուրջ 2000 վարժարաններ» (էջ 272): Այնինչ, համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թ. տվյալների, Արևմտյան Հայաստանի վանքերից ու եկեղեցիներից 1915 թվից հետո կանգուն է մնացել 913 շինություն, որոնցից 464-ը հետագայում լրիվ ոչնչացվել են, 252-ը՝ վերածվել ավերակների, իսկ 197-ը ենթակա են վերականգնման: Հեղինակն ավելի է խորանում խնդրի էության մեջ՝ նշելով. «Երբ խոսում ենք «շարունակվող ցեղասպանության» մասին, նկատի ունենք նաև թուրքերի կողմից հայկական պատմաճարտարապետական հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի նկատմամբ պետականորեն շարունակվող ոչնչացման քաղաքականությունը, որը նպատակ է հետապնդում Արևմտյան Հայաստանում վերացնել այն ամենը, ինչն ապացուցում կամ վկայում է այդ տարածքի իրական տիրոջ՝ հայերի մասին» (էջ 272): Այդ բոլորին Ա. Մարուքյանն ավելացնում է նաև հայ ժողովրդի հոգևոր և մտավոր դարավոր գանձերը ներկայացնող հազարավոր հայկական ձեռագրերի ոչնչացումը, որի արդյունքում հետագա սերունդները զրկվել են իրենց նախնիների հանճարեղ մտքից ու ոգուց: Այդ կորուստների հետևանքները ևս վերականգնել հնարավոր չէ որևէ նյութական փոխհատուցմամբ:*

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության նյութական կորուստներին՝ *Ա. Մարուքյանը փաստագրական ստույգ տվյալներ մեջբերելով ցույց է տալիս, թե տնտեսական ինչ օգուտներ է քաղել թուրքական պետությունն իրագործելով հայերի զանգվածային կոտորածներն ու տեղահանությունները. «Բավական է նշել, որ հակառակ պատերազմական ծանր պայմաններին և կայսրության տնտեսության կաթվածահար վիճակին, երկրի պետական բյուջեն արձանագրել է աննախադեպ աճ. այսպես, եթե 1913–1914 թթ. այն կազմում էր 35 մլն օսմանյան ոսկի, ապա 1915–1916 թթ.՝ 38 մլն, իսկ 1917–1918 թթ.՝ 85 մլն: Ակնհայտ է, որ տվյալ պայմաններում թուրքական բյուջեի նման աճը կարող էր ապահովվել միայն հայերի գույքի և ունեցվածքի բռնագրավման հաշվին: Այստեղ տեղին է արձանագրել դատապարտելի այն փաստը, որ թուրքական պետությունը փաստորեն օգտվում էր իր իսկ կողմից կազմակերպված ու իրագործված հանցագործության՝ Հայոց ցեղասպանության պտուղներից, ինչը նույնպես հանցագործություն է» (էջ 276):*

Անդրադառնալով հայ ժողովրդի կրած հոգեբանական *անտեսանելի, բայց խորը հետք թողած Հայոց ցեղասպանության բազմաթիվ ու բազմատեսակ բարդույթներին՝ Ա. Մա-*

ությանը նշում է, որ պատմական այդ դաժան ու սահմռկեցուցիչ իրադարձություններն անմիջականորեն անդրադարձել են ոչ միայն Եղեռնի թոհուբոհից անցած ականատես սերնդի, այլև հետագա սերունդների հոգեբանության վրա, որոնց մոտ նկատելի է թերարժեքության բարդույթ ու վախի զգացողություն:

Հետազոտողը նշում է, որ բավական ծանր հարված է հասցվել նաև ցեղասպանության ընթացքում բռնի մահմեդականացված հայերին, որոնք ստիպված ընդունել են օտարի կրոնը՝ տասնամյակներ շարունակ թաքցնելով իրենց ազգային ինքնությունը:

Թուրքիայի Հանրապետությունում մինչև օրս պետականորեն շարունակվում է Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը, որը ոչ միայն հարցականի տակ է առնում կատարված հանցագործությունը, այլև ոտնահարում միլիոնավոր անմեղ նահատակների հիշատակը, վիրավորում ականատես վերապրածների, նրանց հաջորդ սերունդների և ընդհանրապես համայն հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը: Ուստի հեղինակն այդ ժխտողականության շարունակվող քաղաքականությունը համարում է ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդին հասցվող լրացուցիչ հոգեբանական հարված «արդեն տեղեկատվական դաշտում»:

Որպես իր նյութին քաջատեղյակ գիտնական՝ Ա. Մարուքյանը Հայոց ցեղասպանության կորուստները հստակեցնելուց հետո իրավական տեսակետից հիմնավորում է ցեղասպանության հետևանքները հաղթահարելու առումով Թուրքիային ներկայացվելիք պահանջները:

Ըստ հեղինակի՝ Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքի՝ հայրենազրկումի *հաղթահարման պահանջն ավելի նպատակահարմար է ամփոփել այն սահմաններում, որոնք ամրագրված են 1920 թ. նոյեմբերի 22-ի ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով: Այն ոչ միայն չի հակասում, այլև համապատասխանում է ցեղասպանության իրականացման պահին գործող միջազգային իրավական նորմերին, մասնավորապես՝ 1907 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված «Միջազգային բախումների խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի դրույթներին: Ուստի Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը կարելի է դիտել որպես քաղաքական պատասխանատվություն՝ հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության:*

Հեղինակն անդրադառնում է նաև մշակութային ցեղասպանության *դրույթին, որը ներկայացվել է ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագծում: Սակայն մեծ տերությունների ճնշման հետևանքով, այն դուրս է մղվել փաստաթղթի բնագրից: Ա. Մարուքյանը գտնում է, որ այդ բացը հնարավոր է լրացնել 1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի՝ ոչ-մահմեդականների իրավունքների պաշտպանությանը վերաբերող համապատասխան հոդվածներով, ըստ որոնց թուրքական կառավարությունը պարտավոր է «լիակատար պահպանության տակ առնել» փոքրամասնությունների եկեղեցիները, գերեզմանատներն ու կրոնական հաստատությունները: Մանավանդ որ, Թուրքիայում գտնվող հայկական մշակութային կոթողների հարցը կարող է պաշտպանվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի*

կանոնադրության դրույթներով, քանի որ թե՛ Հայաստանը և թե՛ Թուրքիան այդ կազմակերպության անդամ երկրներ են:

Անդրադառնալով նյութական կորուստների *մասին միջազգային իրավունքի նախատեսած պատասխանատվությանը՝ հեղինակը նշում է, որ Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման համար նախադեպային հիմք կարող է հանդիսանալ 1952 թ. սեպտեմբերի 10-ի մի կողմից Գերմանիայի Դաշնային Հանրապետության և մյուս կողմից Գերմանիային ուղղված հրեական Պահանջների կոնֆերանսի ու Իսրայել պետության միջև կնքված Լյուքսենբուրգյան համաձայնագիրը, որով Գերմանիան պարտավորված սկսել է հատուցել Հոլոքոստի ընթացքում հրեաներին հասցված նյութական վնասները:*

Եվ, ի վերջո, Ա. Մարուքյանն անդրադառնում է Հայոց ցեղասպանության հոգեբանական *կամ* բարոյական *հետևանքների վերականգնմանն ուղղված միջազգային իրավունքում կիրառվող* satisfaction *տարողունակ բառիմաստին և բացատրում, որ այն կարող է արտահայտվել պաշտոնական ներողություն հայտնելով կամ այլ պատշաճ ձևով: Հետազոտողը գտնում է, որ դա նախ և առաջ պետք է իրականանա Թուրքիայի կողմից պետականորեն կիրառվող Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության կասեցմամբ: Հետևաբար, ժամանակակից Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը նույնպես չի կարող զերծ մնալ եվրոպական որոշ երկրներում արդեն իսկ սկիզբ առած ցեղասպանության հանցագործության ժխտումը քրեականացնող օրենսդրության նախատեսած պատիժներից:*

Ցեղասպանագետ Ա. Մարուքյանն իր այս ծանրակշիռ ուսումնասիրությամբ եզրակացնում է. «Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման, և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հիմնավորման պատմահրավական փաթեթը պետք է Հայաստանի և Սփյուռքի կողմից միասնաբար մշակվի, որպեսզի ցեղասպանության հետևանքների և Թուրքիային ներկայացվելիք պահանջների հարցում ձևավորվի միասնական համազգային մոտեցում, որից այլևս չի կարող լինել որևէ շեղում» (էջ 290):

Պատմահրավական զույգ մոտեցումներով ուսումնասիրված սույն օրակարգային աշխատությունը նոր մակարդակի խոսք է, որը գալիս է ի մի բերելու և հիմնավորելու մինչ այդ կատարված պատմագիտական հետազոտությունները: Ուստի գտնում ենք, որ Ա. Մարուքյանի սույն աշխատությունն արժանի է, որ թարգմանվի և հրատարակվի նաև տարբեր լեզուներով, որպեսզի Սփյուռքի օտարացող սերունդների համար ևս համազգային գործունեության ուղենիշ դառնա:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ